

Ս. Ս. ՄԵԼԻՓՈՆԻԱՆ

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԼԵԶՎԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Հովհ. Թումանյանը 90—900-ական թվականները բնորոշել է որպես մեր դրական լեզուն վերջնականապես մի ճանապարհի վրա հաստատելու, մեկընդմիջում նրա բնավորությունն ու սահմանները որոշելու շրջան. «Աշխարհաբարի ու գրաբարի կովին հաջորդել է նոր խնդիր. — թուրքահայ և ռուսահայ գրական լեզուների խնդիրը, էս գրական լեզուների և ժողովրդական բարբառի հարաբերության և լեզվական փոխառությունների խնդիրը, ուրիշ խոսքով՝ դրված է մեր գրական լեզուն վերջնականապես մի ճանապարհի վրա հաստատելու, միանգամ ընդմիջում նրա բնավորությունն ու սահմանները որոշելու խնդիրը»¹:

Հովհ. Թումանյանը ինչպե՞ս է ըմբռնել ժամանակի գրական լեզվի առաջ ծառայած հիմնական խնդիրները և ինչպիսի՞ լուծում է տվել դրանց:

Գրական լեզվի մշակման ու ժողովրդայնացման հարցերը քննելիս Հովհ. Թումանյանը ելնում էր այն սկզբունքից, որ լեզուն համաժողովրդական, համազգային երևույթ է: Ժողովրդին համարելով տվյալ լեզվի ստեղծողն ու զարգացնողը, մյուս կողմից ամենայն իրավամբ նա լեզուն համարում էր տվյալ ժողովրդի ստեղծագործական կարողությունների, ինքնուրույնության ու հանձարի ամենախոշոր դրոշմը: Նա միաժամանակ լեզուն դիտում էր որպես ազգի գոյության կարևոր գործոն: Այսպիսի համոզմունք ունենալով՝ հայ ժողովրդի գոյության համար վճռական, բախտորոշ նշանակություն ունեցող հանգամանքներում նա առաջնակարգ, անհետաձգելի խնդիր էր համարում ազգային ընդհանուր գրական լեզվի մշակումը: «Եվ հենց ինքը հայ ազգն էլ, — 1917 թ. գրել է Թումանյանը, — որի ամբողջությունը չախջախված ու խորտակված է և մասնատված, հալածված, տարածված է ամեն կողմ՝ իր բոլոր մասերով՝ ամեն կողմից ճիգ է անում նորից իրեն հավաքելու, իրար գալու և նորից ամբողջանալու. էս հանգամանքներում մի ազգային ընդհանուր գրական լեզվի խրնվիրը առաջնակարգ խնդիր է»²:

Արդ տեսնենք, թե այդքան կարևորություն տալով գրական լեզվին, Թումանյանը դրա զարգացման ի՞նչ ուղի և հարստացման ինչպիսի՞ աղբյուրներ էր նշում:

Մ. Նալբանդյանի ու Ղ. Աղայանի նման Հովհ. Թումանյանն էլ աներևակայելի էր համարում գրական լեզվի մշակումն ու հետագա զարգացումը առանց դրա և մյուս կողմից տերիտորիալ բարբառների, հին գրական լեզվի (գրաբար) և օտար լեզուների փոխհարաբերությունը պարզելու: Խիստ կարևորություն տալով այդ հարցերի տեսական մեկնաբանմանը, նա տարբեր առիթներով հաճախ էր անդրադառնում գրական լեզվի հարստացման այդ աղբյուրներին վերաբերող հարցերի քննարկմանը:

¹ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, Երևան, 1951, հատ. 4, էջ 370—371:

² Նույն տեղում, էջ 401 (բնագծումը իմն է—Ս. Մ):

Նախ՝ գրական լեզվի և տերիտորիալ բարբառների փոխհարաբերության մասին: Պետք է նշել, որ Թումանյանն ընդհանրապես ճիշտ և միանգամայն ընդունելի կարծիք է ունեցել բարբառների մասին: Հակառակ այն թյուր պատկերացմանը, ըստ որի իբր մեր լեզվի բարբառներն առաջացել են գրաբարի աղավաղումից, Թումանյանը նշում էր, որ դրանք գոյություն են ունեցել շատ վաղուց և ոչ թե գրաբարի աղավաղված ձևերն են, այլ «կենդանի լեզվի ճյուղերը» (հատ. 4, էջ 371):

Բարբառի մասին Թումանյանի ունեցած ճիշտ պատկերացումը նրան հնարավորություն է տվել պաշտպանել այն տեսակետը, թե ազգի առաջացման պրոցեսում որևէ բարբառ կարող է ազգային գրական լեզվի հիմքը հանդիսանալ: Այնուհետև նա այն կարծիքն է հայտնում, թե ազգային գրական լեզվի հիմք բարբառի ընտրությունը ամենևին էլ պատահական լինել չի կարող, որ դրա համար տվյալ բարբառը պիտի ունենա օբյեկտիվ նախադրյալներ:

Մ. Նալբանդյանի նման Թումանյանն էլ այն տեսակետն էր պաշտպանում, որ ժողովրդական լեզվի հիման վրա ձևավորվող գրական լեզուն հետզհետե իր մեջ պիտի առնի ու ամփոփի «բարբառների կենսունակությունն ու հարստությունը», այսինքն՝ նա էլ իրավամբ բարբառները համարում էր զարդացող գրական լեզվի հարստացման կարևոր աղբյուրներից մեկը: Այն առարկություններին, թե իբր ղեղեցիկ ու հարուստ չեն հայոց ժողովրդական լեզուն, հայ բարբառները, Հովհ. Թումանյանը պատասխանում է. «Այո, ղեղեցիկ ու հարուստ չէր և ինքը — հայոց ազգային ոգու մարմնացումը — Սասունցի Դավիթը, քանի որ մի արհամարված նախրապանի վիճակի մեջ էր և կոշտ լեռնականի պարզությամբ նախիր էր արածեցնում ու չգիտեր, թե ինչ ուժ կար թաքնված իրեն մեջ կամ ինչ ապագա՝ պահված իր առջև. մինչև որ խորհրդավոր ժամանակը հասավ, ունեցավ իր ուժի գիտակցությունը, մտավ արդարության մեջ իրեն վերապահված իրավունքի մեջ, հագավ հայրական զինավառությունը, հեծավ Քուռկիկ Ջուլալին, ձեռքն առավ Թուր Կեծակին ու... միանգամից վերջացավ ամեն վեճ ու ամեն տարակուսանք»:

Մինչև էս պապենական հոգևոր զենքով ու զրահով՝ հայ ժողովրդի կենդանի խոսքով չգինավառվի հայ գրողը՝ միշտ պիտի մնա սրա սրա դուռը — փոխառություններ ու թարգմանություններ որսալով, ինչպես Դավիթն էր մի ժամանակ լոր որսում պառավի տրտում»:

Այս պատկերավոր արտահայտության միտքն էլ դարձյալ այն է, որ հայ գրական լեզուն չի դառնա ղեղեցիկ ու հարուստ այնքան ժամանակ, քանի դեռ հայ գրողը չի զինավառվել հայ ժողովրդի կենդանի խոսքով:

Մ. Նալբանդյանի նման Թումանյանն էլ այն համոզմանն է եղել, որ գրական լեզուն վերջնականապես կկազմակերպվի միայն այն դեպքում, երբ «մեր ժողովրդի լեզուն իր բոլոր դաշտերից, սարերից ու ձորերից կենդանի վտակներով կգա միանալու սրա (գրական լեզվի — Ս. Մ.) մեջ, և բոլոր բարբառները հանդես կրեն իրենց գանձերը»:

Ըստ Թումանյանի՝ բարբառների գանձերի օգտագործումը ոչ միայն պիտի հանդիսանա գրական լեզվի բառապաշարի սոսկ հարստացման միջոց, այլև՝ դա պիտի նպաստի այն բանին, որ գրական լեզուն ավելի հարապատ ու հաս-

³ Նույն տեղում, էջ 370—386:

⁴ Նույն տեղում, էջ 113:

կանալի դառնա ժողովրդական լայն մասսաներին: Գրական լեզվի հարստացման աղբյուրներից առաջնությունը տալով ժողովրդական կենդանի լեզվի բարբառներին՝ Հովհ. Թումանյանը մի հիմնական նպատակ է հետապնդում. դրական լեզուն մշակել կենդանի, ժողովրդական լայն մասսաներին հասկանալի ընդհանուր լեզվին հարազատ ոգով, նրա գերագույն «իմաստն ու խորհուրդը» համարելով հայ մարդու, հայ ժողովրդի սրտին հարազատ մնալը:

Հովհ. Թումանյանը պահանջում էր այս նպատակին ծառայեցնել ոչ միայն գեղարվեստական գրականությունը, այլև մամուլը: Ահա թե ինչու դիմելով պավառներում լույս տեսնող թերթերին՝ մեր լեզվի ու գրականության առողջ զարգացման համար նրանց ուշադրությունը հրավիրեց հետևյալ կարևոր հարցի վրա. «Դուք ապրում եք ժողովրդի մեջ, ժողովրդի համար և խոսելու եք նրա հետ: Ինչ լեզվով եք խոսելու. շատ կարևոր խնդիր է: Դուք այժմ խոսում եք գրական կոչված լեզվով, էն լեզվով, որով խոսում են Թիֆլիսի ձեր մեծ քույրերը:⁵ Բայց իմացած եղեք, որ էս լեզուն աղքատ, չոր ու ցամաք բառերի մի տերողորմիկ է, անո՞ւ ու անկենդան: Մի շփոթվեք սրա քաղքենի հավակնությունից ու գովասանքից և անտես մի անեք կամ վերելից մի նայեք էն գավառների կենդանի բարբառներին, որոնց մեջ դուրս եք եկել գործելու»⁶:

Թումանյանը ցանկանում էր, որ գոնե գավառում լույս տեսնող մամուլը իր մասնակցությունն ունենար մեր գրական լեզուն ժողովրդական լայն մասսաներին հարազատ դարձնելու գործում: Նրա կարծիքով դա պիտի իրականանար ոչ թե «քաղքենի հավակնություն» ունեցող Թիֆլիսի մեծ քույրերի լեզվով բարբառելով, այլ բնաշխարհիկ ժողովրդի կենդանի լեզվի գանձերի վերհանումով և դրանց մասսայական յուրացումով. «Այժմ դուք փոխանակ էս բնական ու առողջ ճանապարհով գնալու, — սրտի դողով ասում է Թումանյանը, — հակառակ կգնաք և փոխանակ ժողովրդի լավը մեզ տալու, մեր սխալներն ու դատարկ, ողորմելի ֆրազները կտարածեք նրա մեջ»⁷:

Քարբառներից օգտվելու հարցին կրկին անդրադառնալով Մեղրյանին ուղղած պատասխան հոգվածում՝ Հովհ. Թումանյանը գրում է. «Իսկ ինչ վերաբերում է ժողովրդական բարբառներից օգտվելուն, դա ոչ թե դատապարտելի է, այլ հենց դա է բնական ճանապարհը կայտառ ու կենդանի լեզու ունենալու»⁸: Այս է Թումանյանի կարծիքը ժողովրդական բարբառների դերի մասին, որոնցից օգտվելու հարցում նա իրեն չափազանց ազատ էր զգում և նույնը պահանջում մեր նաև մյուս գրողներից, միաժամանակ նշելով. «Իհարկե շնորհքի բան է, թե ով ինչքան ու ինչպես կօգտվի էդ կենդանի աղբյուրներից»⁹:

Քացի բարբառներից գրական լեզվի հարստացման, ժողովրդայնացման գործում Հովհ. Թումանյանը հսկայական նշանակություն էր տալիս նաև ժողովրդական բանահյուսության լեզվական գանձերից օգտվելու խնդրին: Կարող ենք ասել՝ Թումանյանն առաջինն էր մեր գրականության մեջ, որ առանձին սրույնամբ դրեց բանահյուսության լեզվական հարստությունների նպատակահարմար օգտագործման խնդիրը, երևելով այն ճիշտ տեսակետից, որ «սա է այն

⁵ Ակնարկում է Թիֆլիսիում լույս տեսնող հայ մամուլը. Թումանյանի հաջորդ դիտողությունները հենց այս մամուլի լեզվի մասին են:

⁶ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 112—113:

⁷ Նույն տեղում, էջ 113:

⁸ Նույն տեղում, էջ 121:

⁹ Նույն տեղում էջ 113:

ուղիղ ճանապարհը, որով հոսանք պետք է տալ, ներս բերել առողջ ժողովրդական ստեղծագործությունները և ուժեղ, հարուստ, կենդանի լեզուն»¹⁰։

Ժողովրդական լայնահայտության լեզվական հարստությունները համարելով կազմակերպվող գրական լեզվի հարստացման, նրա ժողովրդայնացման կարևոր աղբյուրներից մեկը՝ Հովհ. Թումանյանն իր գործունեության դեռ վաղ շրջանից պահանջում էր օր առաջ հավաքել, գրի առնել ժողովրդական բանավոր ստեղծագործությունը, նրա «խոսքերն ու դարձվածքները», զգալով, որ «...ժողովուրդը մի գրությունից անցնում է դեպի մյուսը... և այդ գրության մեջ շատ բաների հետ կորցնում է և մեր լայնավոր գրականությունը»¹¹։

Աներևակայելի համարելով գրական լեզվի ժողովրդայնացումը առանց ժողովրդական բառ ու բանի առատ, նպատակահարմար օգտագործման՝ Հովհ. Թումանյանը կոչ էր անում հայ գրողներին, բանահավաքներին ու զավառում լույս տեսնող մամուլին հավաքել դրանք, փրկել կորստից։ Երբ 1912 թ. լույս տեսավ Սահակ Ամատունու «Հայոց բառ ու բանը», ժողովրդական բառերի և հատկապես ոճերի ու դարձվածքների այդ արժեքավոր ժողովածուն, Հովհ. Թումանյանը ջերմ ողջունեց հեղինակին. «Դուք սրանով անմահացնում եք Ձեզ... Առանց էդ տեսակ աշխատանքների, անկարելի է ստեղծել մեր գրական լեզուն»¹²։

Եվ ընդհանրապես, մեր ազգային գրական լեզվի հարստացման ու զարգացման գործում Հովհ. Թումանյանը մեծ նշանակություն էր տալիս կենդանի լեզվի բառարանը կազմելուն. «...Ազգային ընդհանուր գրական լեզվի խնդիրը առաջնակարգ խնդիր է։ Ըսկ էդ լեզուն ստեղծելու համար պետք է հավաքել բարբառների բառամթերքը, կազմել հայոց կենդանի լեզվի բառարանը, բոլոր բարբառների բառերի ու ոճերի գանձարանը»¹³։

Այսպիսով՝ Մ. Նալբանդյանի ու Ղ. Աղայանի նման Հովհ. Թումանյանն էլ գրական լեզվի հարստացման կարևոր աղբյուրներից մեկը համարում էր համաժողովրդական կենդանի լեզվի բարբառներն ու ժողովրդական բանահյուսությունը։ Նա աներևակայելի էր համարում գրական լեզվի առաջընթացը առանց դրանց գանձերի օգտագործման։

* * *

Վերևում նշեցինք, որ Հովհ. Թումանյանը գրական լեզվի հարստացման մյուս միջոցը համարում էր օտար լեզուներից կատարվող փոխառությունները։ Այս հարցում ևս նա մեր գրական լեզվի մշակման համար մղվող պայքարի լավագույն տրադիցիաների շարունակողն է եղել և հաճախ անհաշտ պայքար է մղել նրանց դեմ, ովքեր ցանկացել են պատենշ կանգնեցնել մեր լեզվի զարգացման առաջ։ 1910 թ. բանակոթիվ մղելով «մաքուր հայերենի» նախանձախնդիր իր հակառակորդների դեմ, Թումանյանը գրում է. «Թե՛ ժողովրդական, թե՛ գրական լեզվի մեջ լեզվական փոխառություններ եղել են միշտ, կլինեն միշտ, և շատ է գեղեցիկ, որ էդպես է. միայն թե պետք է իմանալ շնորհքով, խելացի առնել ու տեղը գործածել»¹⁴։

¹⁰ Նույն տեղում, էջ 96։

¹¹ Թումանյանը Բնագիտության, Հայաստան, Երևան, 1939, էջ 32։

¹² Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 383։

¹³ Նույն տեղում, հատ. 4, էջ 401։

¹⁴ Նույն տեղում, էջ 212։

Հովհ. Թումանյանը ճիշտ է նկատել, որ փոխառությունների կարիք ունի ոչ միայն մեր նոր գրական լեզուն, այլև իր ժամանակին գրաբարն ևս կատարել է բազմաթիվ փոխառություններ, որ փոխառությունները, որպես լեզվի բառապաշարի հարստացման միջոց, հնագույն երևույթ են:

Հատկապես իրեն և Ավ. Իսահակյանին ավելորդ, անտեղի փոխառությունների մեջ մեղադրող, ընդհանրապես փոխառություններ ժխտող Պ. Մեղրյանին պատասխանելիս, թվելով մի քանի տասնյակ բառեր, որոնք շատ վաղուց են մտել մեր լեզվի բառապաշարի մեջ, Հովհ. Թումանյանն ավելացնում է. «Բայց հիմի մի ուրիշ հարց: Դրանք եթե մեր լեզվի մեջ են մտել ու հայացել, արդյոք զրանցից հետո կա՞նգ է առել էդ պրոցեսը և էլ նոր բառեր չեն մտնում ու հայանում թե մեր ժողովրդական լեզվի մեջ, թե գրական, ուրիշ խոսքով՝ էլ չեն կատարվում ժողովրդական ու գրական լեզվի փոխառություններ: Իհարկե, պատասխանն էլ գրական է լինելու»¹⁵:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Հովհ. Թումանյանը լեզվական փոխառությունների հարցը կապում է տվյալ լեզուն կրող ժողովրդի պատմության, տնտեսական ու մտավոր կյանքի պայմանների հետ: Նկատելով, որ որևէ ժողովրդի կյանքը զարգանում է նաև արտաքին ազդեցությունների տակ, որ «կուլտուրաների ու գաղափարների ազդեցությունները ոչ մի ցանկապատ չեն ճանաչում»¹⁶, իսկ ժողովուրդները «նորանոր գաղափարների հետ նորանոր ոճեր ու բառեր են ընդունում»¹⁷, Թումանյանը լեզվական փոփոխությունները բնական անհրաժեշտություն է համարում:

Հովհ. Թումանյանը լեզուն համարելով ամեն մի ժողովրդի ինքնուրույնության ու հանձարի ամենախոշոր դրոշմը, միաժամանակ հեռու է եղել նեղ ազգայնական այն կարծիքից, թե իբր օտար լեզուներից կատարվող փոխառությունները կարող են վնասել որևէ ժողովրդի ինքնուրույնությունը, ապականել ու աղճատել նրա լեզուն: Նա գրական լեզուն չէր սահմանափակում ազգային նեղ շրջանակներում ի սեր նրա «մաքրության»։ «Ոչ մի լեզու, — գրում է Թումանյանը, — ինչքան էլ իր ազգային բնավորությունը պահի ու զարգացնի, չի կարող փոխառությունից ազատվել ու կղզիանալ: Ընդհակառակը քանի զարգանում, էնքան ավելի շատ, ավելի բարդ պահանջների պիտի պատասխանի և ավելի շատ ու առատ պիտի թե փոխ առնի, թե փոխ տա»¹⁸:

Իր «Լեզվական փոխառություններ» հոդվածում թվելով ոռուսերենից և այլ լեզուներից կատարվող նորանոր փոխառություններ, վերջիններից վշտացող ու դրանց դեմ «կոպող» մարրամոլներին, նեղ ազգային կեղևի մեջ ներփակվող պահպանողականներին դիմելով՝ Թումանյանը հեզանքով հարցնում էր. «Ի՞նչ եք անելու: Եվ ինչո՞ւ պիտի վշտանաք ու կոպեք, ի սեր աստուծո, դուք կարծում եք միայն նրանով պիտի ճոխանաք ու բավականանաք, ինչ որ հայի միտքն ու հանձա՞րն է տալիս...»¹⁹:

Այժմ տեսնենք, թե ըստ Հովհ. Թումանյանի ո՞ր դեպքում պիտի դիմել լեզվական փոխառությունների:

¹⁵ Նույն տեղում, էջ 120:

¹⁶ Թումանյանը քննադատ, Երևան, 1939, էջ 146:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Հովհ. Թումանյան, Երկեր, հատ. 4, էջ 374:

¹⁹ Նույն տեղում, էջ 120:

Եթե մեր գրական լեզվում կա տվյալ առարկան կամ հասկացությունն արտահայտող բառ, ապա փոխառությունն անտեղի է ու ավելորդ, իսկ եթե փոխառնվող բառի «տեղը համազոր ու համաշունչ մի այլ բառ դնելու» համար լեզուն իր ներքին միջոցներով հնարավորություն չի ընձեռնում, ապա անհրաժեշտ է դառնում օտար բառի ներմուծումը:

Հայ մաքրամոլները Հովհ. Թումանյանին մեղադրում էին «ջան» և նման բառերի օգտագործման համար, դրանք համարելով մոնղոլական-թաթարական: Նա իր խոսքն ուղղելով «մաքուր հայերենի» նախանձախնդիրներին՝ վրդոված հարցնում էր. «Խնդրեմ ասացե՛ր եթե մեր լեզվից հանենք ձեր հալածած «ջան»-ը, որ շինական է, թե մոնղոլական-թաթարական, ինչո՞ւ կփոխարինե՛ք: Մի քիչ մտածեցե՛ք, կտեսնե՛ք. մի բառ էք վտարում, որի տեղը համազոր ու համաշունչ մի այլ բառ դնել չե՛ք կարող: Դրա նման և շատ ուրիշ բառեր, որ մաքուր հայերեն չեն: Եթե օտարամուտ բառերի փոխարենը դուք ունե՛ք—ինչ խոսք»²⁰:

Եվ ահա, թե նրանք այդ օտարամուտ բառերի փոխարեն ինչ էին առաջարկում, մեր գրական լեզվի լավագույն մշակներին և հատկապես Հովհ. Թումանյանին ու Ավ. Իսահակյանին ինչպես էին սովորեցնում «մաքուր հայերեն» գրել: Այսպես, օրինակ, նրանք առաջարկում էին «ջան»-ի փոխարեն դործածել «հոգյակ»: «Եվ ահա բանը դրսևաց, — հեղինակը է Թումանյանը, — այսուհետև փոխանակ ավագե՛ր ջան կամ Դրիգոր ջան ասելու, մաքուր հայերենով կասենք հոգյակ եղբայր²¹, կամ հոգյակ Դրիգոր, կամ թե չէ, քեֆ անելիս ներողություն, մաքուր հայերենով ասենք, խրախճան անելիս կամ առհասարակ ուրախանալիս փոխանակ «ջան» բացականչելու, կկանչենք «հոգյակ...»: Եվ միթե դուք չե՛ք տեսնում կամ չե՛ք զգում, թե ինչքան է սա անմիտ ու անճշակ: Մի՞թե չե՛ք տեսնում, որ հոնքը շինելու տեղը աչքն էլ հանում եք»²²:

Հովհ. Թումանյանին դուր չէր դալիս ընդհանրապես պոլսահայերի լեզվամշակման քաղաքականությունը օտար բառերի օգտագործման հարցում. նրանք անվերապահորեն «ամեն բան» թարգմանելու «շինելու» գիծն էին բրոնելու: Թումանյանն էլ դեմ չէր թարգմանելուն, միայն այն պայմանով, եթե լեզուն ընդունակ է «հարազատ թարգմանելու», ինչպես՝ տելեֆոն-հեռախոս, տելեգրաֆ-հեռագիր, վելոսիպետ-հեծանիվ²³ և այլն: «Բայց հո չի կարելի ամեն բան թարգմանել կամ շինել, էքսպրոպրիատոր՝ ճողոպրիստ, ինչպես արել են մեր պոլսահայերը, տրամվայը՝ քարշակ անվանել, հանդ. Դամառ Քաթիպայի նման, խավիարը՝ ձկնկիթ, կամ ֆրակը՝ պոչազգեստ»²⁴:

Այնուհետև. «Անճիշտ կամ անշնորհ թարգմանություններն ավելի շատ են վնասում լեզվին, քան ուղղակի փոխառությունը...»²⁵:

Փոխառությունների հարցում ընդհանրապես ճիշտ ուղու վրա կանգնած լինելով, այնուամենայնիվ տեղական-ասիական օտար բառերի օգտագործման հարցում Հովհ. Թումանյանը որոշ սխալ էր թույլ տալիս, երբ կարծես ցանկանում էր մի տեսակ հավասարության նշան դնել դրանց և ևլրոպական-ռուսական բառերի միջև և դրանցից հավասարաշափ օգտվելու խնդիր էր առաջ

²⁰ Նույն տեղում, էջ 120:

²¹ Այս և հետագա ընդգծումները Թումանյանին են:

²² Հովհ. Թումանյան, Երկեր, հատ. 4, էջ 142:

²³ Նույն տեղում, էջ 121:

²⁴ Նույն տեղում, էջ 121:

²⁵ Նույն տեղում, էջ 375:

բաշում: «Խոսելիս թե գրելիս փոխ առնելիս թե թարգմանելիս զգույշ լինել ու
բարեխիղճ,—»²⁴:

Այնուհետև, Թումանյանն սկզբունքորեն ճիշտ է լուծել օտար նաև մյուս
տեսակ բառերի գործածության հարցը: Նա պահանջում էր փոխ առնել ոչ միայն
այնպիսի բառեր, որոնց տեղը «համազոր ու համաշունչ» այլ բառեր գնելու
համար մեր լեզուն իր ներքին միջոցներով հնարավորություն չի ընձեռում,
այլև այնպիսիները, որոնք թեև իրենց համապատասխան ունեն հայոց լեզ-
վում, բայց «միջազգային բառերն են, բոլոր ազգերը գործ են ածում» ինչպես,
օրինակ, ինտելիգենտ, պոեմ, լեգենդ, կոլտուրա և այլն:

Իսկ ինչ վերաբերում է օտար բառերի ու արտահայտությունների անտեղի
ներմուծությանը, ապա Թումանյանը վճռականորեն դեմ էր դրան:

Թումանյանը բարբառներն ու օտար լեզուները դիտել է որպես գրական
լեզվի հարստացման աղբյուրներ և վճռականորեն դեմ է եղել օտար նույնիսկ
առանձին բառերի ու արտահայտությունների անտեղի գործածությանը, շատ
զգույշ է եղել փոխառությունների մասին իր տված խորհուրդներում՝ դրանք
համարելով «մեծապես տաղանդի ու շնորհքի գործ»²⁵:

Այժմ տեսնենք, թե Հովհ. Թումանյանը ինչ կարծիք է ունեցել մեր առան-
ձին գրողների և ընդհանրապես գրական լեզվի մասին:

Հարգելի պրոֆ. Սևակը այն կարծիքն է հայտնել, թե Հովհ. Թումանյանը չի
ընդունել մեր գրական լեզվի որևէ օրինակելի ներկայացուցիչ, դժգոհել է գրա-
կան լեզվից կամ ընդհանրապես՝ ժխտել է նրա գոյությունը:

Առանձին-առանձին քննենք այս կարծիքները և տեսնենք, թե որքանով
են համապատասխանում իրականությանը: Առաջին կարծիքի համար, թե
Հովհ. Թումանյանը չի ընդունել գրական լեզվի որևէ օրինակելի ներկայա-
ցուցիչ²⁶, հավանաբար հիմք է հանդիսացել նրա հետևյալ արտահայտությու-
նը. «Ձեր առաջ են բոլոր հայ գրողները, ո՞րի լեզուն եք համարում մաքուր
հայերեն. ցույց տվեք ու հրամայեցեք, որ նրա նման գրեն: Իհարկե, շատ միա-
միտ կլինեք եթե ցույց տաք»²⁷:

Սակայն բերված տողերի միտքը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ
է վերհիշել, թե Հովհ. Թումանյանն ինչ առիթով է գրել դրանք: Ոմն Մեղրյան
1910 թ. գրական լեզվին վերաբերող երկու հոդված է հրատարակում, որոնց
մեջ ցավով դանգատվում է, թե ինչ որ հնչվում է ժողովրդի բերանում, լինի
դա հայերեն, թե թուրքերեն, թաթարերեն, թե ռուսերեն, մեր գրողները (իբր
հատկապես Ավ. Իսահակյանն ու Հովհ. Թումանյանը) վերցնում են և իսկույն
գրվածքի մեջ գնում: Նա դատապարտում է ընդհանրապես օտար լեզուներից
և մինչև անգամ հայ լեզվի բարբառներից վերցրած բառերի գործածությունը
և «մաքուր հայերենի» պահանջ էր դնում, այսինքն՝ հրամայում էր հայ գրա-
կան լեզվից դուրս վռնդել հին ու նոր փոխառությունները, ժողովրդական լեզ-
վից վերցրած բառերը: Իր պատասխան հոդվածում Հովհ. Թումանյանն այս-
պիսի հեղինակություն չի մեղք պ. Մեղրյանին. «Ձեր «Ուշացած պատասխանի»²⁸

²⁶ Նույն տեղում, էջ 375:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Տե՛ս. պրոֆ. Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն,

էջ 140:

²⁹ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 140.

³⁰ Մեղրյանի երկրորդ հոդվածի վերնագիրն է:

ու նրանից առաջ տպված հոդվածի միտքն էն է, թե հայ գրողները պետք է մաքուր հայերեն գրեն: Ծառ ուշացած ու շատ հասարակ մի խելոք խոսք: Ջեզանից շատ վաղ բոլոր հայ գրողները մտածել են որ մաքուր հայերեն գրեն: Բայց ի՞նչ կնշանակի մաքուր հայերեն, ահա խնդիրը»³¹:

Պ. Մեղրյանի խորհրդով մաքուր հայերեն գրելու համար պիտի օգտագործել ոչ թե, ասենք, «Գրիգոր ջան», այլ «հոգյակ Գրիգոր» և նման բաներ՝ Հովհ. Թումանյանն այդ համարեց «անմիտ ու անճաշակ»:

Ահա, «մաքուր հայերենի» մասին այսպիսի պատկերացում ունեցող պարոնին դիմելիս է, որ Հովհ. Թումանյանը հեղինակում գրում է, թե բոլոր հայ գրողներից որի լեզուն էք համարում մաքուր հայերեն, ցույց տվեք ու հրամայեցեք, որ նրա նման գրեն: Եվ իսկապես, մեր ո՞ր գրողն է, որ «հանուն մաքուր հայերենի», ասենք «ջան»-ի փոխարեն «հոգյակ» է գործածել:

Ուրեմն, Հովհ. Թումանյանը ոչ թե ժխտում էր օրինակելի գրական լեզվի կամ նրա ներկայացուցչի գոյությունը, այլ հեղինակ էր «մաքուր հայերենի» նախանձախնդիր պ. Մեղրյանին:

Իրականությունն այն է, որ Հովհ. Թումանյանը բարձր է գնահատել մեր գրողներից ու բանաստեղծներից շատերի լեզուն: Ճիշտ է, նա նրանց ստեղծագործությունները լեզվական տեսակետից առանձին ուսումնասիրության նյութ չի դարձրել, ավելի ճիշտ՝ դրանց մասին առանձին հոդվածներ ու աշխատություններ չի գրել, բայց կարելի է վկայակոչել բազմաթիվ փաստեր, թե նա խնչպես դրական է արտահայտվել ն. Արուստյանի, Ղ. Աղայանի, Պ. Պռոշյանի, Վ. Տերյանի ստեղծագործությունների լեզվի մասին:

Զրաժանելով ժամանակի այն թյուր կարծիքը, թե իբրև Աբովյանի «Վերքը» գրված է «պատրաստի բարբառով», Թումանյանը նկատում է, որ Աբովյանը յուր հայրենի վերքը, յուր սրտի ցավը «ժողովրդի լեզվով» է հայտնել³²:

Մեկ այլ առիթով Աբովյանի և նրա լեզվի մասին նա հետևյալն է ասել. «Աբովյանը մեծ գրող է, մեծ տաղանդ, բայց մեզանում չի գնահատված այնպես, ինչպես պիտի գնահատվի: Նրա ուժը իր լեզվի մեջ է, ու բխում է ժողովրդական ակունքից»³³:

Նա այսպես բարձր է գնահատել նաև Ղ. Աղայանի ու Պ. Պռոշյանի լեզուն, այն բնորոշելով «հարազատ» մակդիրով. «...Աղայանն ու Պռոշյանը հարազատ լեզվով գյուղի խարարն էին բերում...»³⁴:

Հովհ. Թումանյանն անդրադարձել է նաև Վ. Տերյանի լեզվի գնահատմանը: Նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուի մասին Ավ. Իսահակյանին հետևյալն է ասել. «Պատկերները թեև թույլ են և քիչ են, բայց լեզուն՝ մաքուր, զտված և արծաթի գանգի պես՝ հնչուն»³⁵:

Մեր գրական լեզվի զարգացման ընթացքի մասին Հովհ. Թումանյանի կարծիքը բնորոշելու ժամանակ պիտի հաշվի առնել հետևյալ հանգամանքները:

³¹ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 140 (ընդգծումը իմն է):

³² Նույն տեղում, էջ 62:

³³ Վերքերի ենք Ն. Թումանյանի հոդվածից (տե՛ս Սովետական գրականություն և արվեստ, 1946, № 3, էջ 66 (ընդգծումը իմն է):

³⁴ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 137:

³⁵ Վերքերի ենք Ավ. Իսահակյանի «Ընտիր երկերից», Հայպետհրատ, Երևան — Մոսկվա, 1948, էջ 148:

նա միշտ ուշադիր է եղել դրական լեզվի նկատմամբ, ընդունել ու պաշտպանել է այն կարծիքը, որ Արուստան ու Նալբանդյանը այն գրողներն էին, որոնք առաջին անգամ պայքար հայտարարեցին գրարարի դեմ, հրաժարվեցին գրարար գրելուց և ձեռնամուխ եղան գրական աշխարհաբարի մշակման աշխատանքին: Հովհ. Թումանյանը հետևել է մեր գրական լեզվի մշակման ու վարդապետական հետադարձ ընթացքին և եկել այն եզրակացության, որ գրական լեզուն մշակման ու վարդապետական «զանազան շրջաններ» է անցել, և յուրաքանչյուր շրջանի մասին նա իր կարծիքն է արտահայտել:

Դեռ 1899 թ. գրած «Մեր նախորդ շրջանի բանաստեղծները» անավարտ հոդվածում Թումանյանը նշում է, թե Արուստանը առաջինն էր, որ լայն մասսաներին հասկանալի լեզվով գրելու նպատակով «սկսում է յուր վերքը — յուր սրտիցավը ժողովրդի լեզվով հայտնել ու պատմել՝ գրականության մեջ անսասան դնելով աշխարհաբարի հիմքը»³⁶:

90-ական թվականներին կրկին անդրադառնալով մեր գրական լեզվի մշակման ու վարդապետական աշխատանքի գնահատմանը, Հովհ. Թումանյանը արձանագրում է, որ աշխարհաբար գրական լեզուն արդեն 50-տարեկան է՝ «միշտ մատղաշ հասակ մանավանդ լեզվի համար»³⁷:

Գրական լեզվի հարցերի քննարկմանը Հովհ. Թումանյանը ուներ պատմական մոտեցում, լեզուն դիտում էր շարժման ու վարդապետական պրոցեսում: Անվերապահորեն ընդունելով, որ իր նախորդները, մեր դեմոկրատ գրողները, զգալի աշխատանք են կատարել նույն գրական լեզվի մշակման ու վարդապետական գործում, Հովհ. Թումանյանը միաժամանակ նշում էր, որ դրանով ամենևին էլ դեռ չի վերջացել գրական լեզվի մշակման գործը և «...չի կարելի գրողին կապանեցնել եղած լեզվի վրա...»³⁸, այսինքն՝ ավելի լավն ունենալու նպատակով դեռ գոհ չէր եղածից:

Հետաքրքիր է, որ իր ժամանակին Բելինսկին էլ նույնն էր ասում ուս գրական լեզվի մասին: Բելինսկին դեռ վերջնականորեն կազմավորված չէր համարում ուս գրական լեզուն անգամ այն բանից հետո, երբ Պուշկինը փայլուն հաջողությունների էր հասել դրա ժողովրդայնացման գործում, և այն վաղուց ճանաչվել էր ժամանակի բոլոր դեմոկրատ գրողների կողմից: Ռուս գրական լեզվի վարդապետական հաջորդ էտապը Բելինսկին կապում էր Գոգոլի անվան հետ, բացահայտելով նրա լեզվի հսկայական նշանակությունը ուս գրական լեզվի հետագա վարդապետական դործում:

Եթե Պուշկին ունեցույ ուս գրական լեզվի մասին 1845 թ. կարելի էր ասել, թե այն «դեռ չի կազմավորվել», ապա ինչու 90—900 ական թվականներին նույնը չէր կարելի ասել նաև հայ գրական լեզվի մասին: Իհարկե, ինչպես Բելինսկին, այնպես էլ Թումանյանը սրանով չէին ժխտում իրենց ազգային գրական լեզվի գոյությունը, այլ ընդգծում էին նրա անընդհատ վարդապետական հրաժեշտությունը:

³⁶ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 62: Այստեղ կարևորն այն է, որ Թումանյանը խոստովանում է աշխարհաբար գրական լեզվի գոյությունը: Մի կողմ ենթադրում գրա հիմնադրի ով լինելու հարցը, որի պատիվը նա վերագրում է Արուստանին, սա մի այնպիսի թյուր կարծիք էր, որ երկար ժամանակ գոյություն ուներ և վերջնականապես ճշտվեց պրոֆ. Գ. Սևակի կողմից:

³⁷ Թումանյանը րննդատ, Պետհրատ, Երևան. 1939 թ., էջ 18:

³⁸ Նույն տեղում, էջ 440:

Նոր հանգամանքների ու պայմանների ազդեցության ներքո գնալով ավելի էր զարգանում մեր գրական լեզուն և զուգընթաց փոխվում էր նաև Հովհ. Թումանյանի կարծիքը նրա վիճակի, նրա ապագայի մասին: Եթե 1896 թ. նա գրում էր, թե մեր գրականությունն այն վիճակի մեջ էր, որ նույնիսկ մի կարգին լեզուն չուներ իր համար, ամեն հեղինակ առանձին լեզվով ու ոճով էր գրում, ապա 1911 թ. խոստովանում է, որ մեր գրողները «գրական լեզուն զարգացնելու գործի վրա են» և հիմնական հարցերում այլևս տարակարծիք չեն:

Գրական լեզվին վերաբերող հարցերի բնարկմանը Հովհ. Թումանյանը վերջին անգամ հիմնավոր ձևով անդրադարձել է 1916 թ. կարդացած «Հայոց գրական լեզվի խնդիրները» դասախոսության մեջ և այդտեղ իր վերջնական կարծիքն է ասել մեզ հետաքրքրող հարցի մասին: Հատկապես այդ հոդվածում կան այնպիսի փաստեր, որոնք հերքում են գրական լեզվի մասին Թումանյանին վերագրած ոչ ճիշտ կարծիքները:

Որպես ապացույց իր այն պնդմանը, թե Թումանյանը մեր գրական լեզուն համարում էր գաղութային, խորթ, պրոֆ. Գ. Սևակը այս հոդվածից վկայակոչել է հետևյալ տողերը. «Մեր գրական լեզուն գլխավորապես ստեղծել են մեր գաղութները իրենց կենտրոն ունենալով Պոլիսն ու Թիֆլիսը, և ինչպես իրենք են խառը, եվրոպական ու հայկականի մեջը տարուբերվում, էնպես էլ իրենց ստեղծած լեզուն է երկու մեծ ազդեցությունների մեջ տարուբերվում»³⁹:

Հոդվածի ոգուն հարազատ մնալու և այս հատվածի միտքը ճիշտ հասկանալու համար, ավելորդ չենք համարում շարունակել այն. իսկ շարունակությունը հետևյալն է. «Բայց միշտ հակված է (գրական լեզուն — Ս. Մ.) դեպի հայրենի հողը. դեպի ազգային կենդանի լեզուն, և քանի գնում՝ էնքան ավելի ու ավելի է որոշվում դրուքյունը»⁴⁰:

Իսկ ի՞նչ հանգամանքներ նկատի ունեն Թումանյանը գրական լեզվի մասին այսպիսի կարծիք հայտնելիս: Նախ՝ այն, որ «...բնաշխարհիկ լեզուն... շատ կամ քիչ ազդում է մեր գրական լեզվի վրա, ազդում է իր միջից դուրս ուղարկած պանդուխտների բերանով, ժողովրդական երգերի միջոցով ու իր ծոցից ելած սակավաթիվ գրողների ձեռքով»⁴¹:

Էլ ավելի ուշագրավ է հետևյալ հանգամանքը. գրական լեզվի հետագա զարգացումն ու վերջնական հաղթանակը Թումանյանը պայմանավորում է ժողովրդական զգացմունքների ուժեղացումով, դեմոկրատական ուսմունքների ու հայացքների խորացումով, ծավալումով և ժողովրդական բանավոր լեզվի հետ ունեցած նրա սերտ փոխհարաբերությամբ: «Ու մեր աչքի առջև, հետզհետե, քանի ժողովրդասիրական զգացմունքներն ուժեղացան, քանի դեմոկրատական ուսմունքներն ու հայացքները խորացան, ծավալ առան, քանի տառապող հայրենի երկիրն ու բնիկ ժողովուրդը ուշադրություն գրավեցին, էնքան ավելի ու ավելի երևան եկան ճանաչվեցին ու սիրվեցին հայ ժողովրդի ազգային ստեղծագործությունները, նրանց թվում նաև լեզուն, և ամենից առաջ լեզուն: Ու ինչպես ամեն մի երևույթ, ամեն մի ստեղծագործություն հանդես եկավ համապատշաճ ասպարեղում, լեզուն էլ առաջ եկավ գրականության մեջ և այժմ հայոց գրական լեզվի դրուքյունը պարզ է ու որոշ»⁴²:

³⁹ Նույն տեղում, էջ 376:

⁴⁰ Նույն տեղում (ընդգծումը իմն է):

⁴¹ Նույն տեղում, էջ 377:

⁴² Նույն տեղում, էջ 378 (ընդգծումը իմն է):

Եվ վերջապես՝ այս նշանավոր հոգևածը այսպիսի տողերով է վերջանում.
«Սակայն այլևս տարակուսանքի տեղիք չկա: Խնդիրն արդեն լուծված է իրականության մեջ և լուծված է՝ դրական իմաստով: Ժողովրդական լեզվի Ընտիր բառերը, սեղմ ու սերտ, պատկերավոր ոճերը, պարզ ու շքեղ ձևերը, էսօր արդեն ամենաթանգ զարդերն են համարվում հայ գրողի երկերի մեջ և համարձակ փոխում են Հարազատ (ոչ գաղութային կամ խորթ — Ս. Մ.) լեզվի համաձայնության վրա ու այլևս կոշտությամբ կամ աղքատությամբ խոսք չկա նրանց դեմ:

Եվ էսպես հայ գրական լեզվի խնդիրը, զանազան շրջաններ անցնելուց հետո, վերջնականապես պիտի վճռվի ժողովրդական լեզվի կատարյալ հաղթանակով, ժողովրդական լեզվի հաղթանակը պիտի պսակվի ազգային ուժեղ գրականությանը, իսկ ազգային ուժեղ գրականությունը՝ կնշանակի՝ ինքնուրույն ու ազատ ժողովուրդ»⁴³: Բնչբա՝ն պարզ ու որոշ է ասված:

Ահա այս է Հովհ. Թումանյանի վերջնական կարծիքը մեր գրական հարազատ լեզվի մասին: Սակայն այստեղ ավելացնենք հետևյալը: Նա զգում էր, որ կապիտալիզմի պայմաններում մեր գրական լեզուն էլ զուրկ էր ազատ զարգացման լայն հնարավորություններից, և ամենայն իրավամբ գրական ուժեղ ու կենդանի լեզվի վերջնական հաղթանակը կապում էր հատկապես ապագա Հայաստանի հետ. «Հայոց ապագա գեղեցիկ գրականության զարգացման գրավականը, — գրում էր Թումանյանը 1919 թ. — ապագա Հայաստանն է, ազատ հարադատ հոգը, ժողովուրդը: Էդ ապագա Հայաստանն էլ կտա մեր գրական ուժեղ ու կենդանի լեզուն»⁴⁴:

Ամփոփենք. Գրական լեզվի մշակման հարցերում հարազատ մնալով իր նախորդների (Խ.՝ Աբովյան, Մ.՝ Նալբանդյան) և ավագ ժամանակակից Ղ. Աղայանի մղած պայքարի ուղուն՝ Հովհ. Թումանյանն այն շարունակեց ու վերջնական հաղթանակի հասցրեց:

Ճիշտ հասկանալով գրական լեզվի համար առաջնակարգ նշանակություն ունեցող խնդիրների էությունը՝ Հովհ. Թումանյանը դրա մշակման ու վարդապետման խնդրում կանգնած է եղել միանգամայն առողջ տեսակետի վրա, այն է՝ գրական լեզուն հիմնել ժողովրդական լեզվի վրա, հարստացնել թե՛ բոլոր բարբառներով, թե՛ գրաբարով և թե՛ ուրիշ ժողովրդական լեզուներից փոխառություններ կատարելով:

Թումանյանը գրական լեզվի մշակման արժեքավորման հարցում ունեցել է պատմական մոտեցում, նշել է, որ այն անցել է զարգացման զանազան շրջաններ: Այս տեսակետից մոտենալով նրա կարծիքների գնահատմանը, մեզ պարզ կդառնա դրանց ճշմարտացիությունը: Ճիշտ է, նրա հոգևածներում (հատկապես սկզբնական շրջանի) երբեմն պատահում են որոշ հակասական, ոչ ճիշտ մտքեր, բայց դրանք որակ չեն կազմում և ամենևին էլ բնորոշ չեն Թումանյանի հայացքների համար: Ճշմարտությունն այն է, որ Թումանյանը վաղուց ընդունել է գրական լեզվի գոյությունը, միաժամանակ ամենայն իրա-

⁴³ Նույն տեղում, էջ 380 (բնագծումն են իմն են):

⁴⁴ Նույն տեղում, էջ 419 (բնագծումն են իմն է):

վամբ նրա մշակման ու զարգացման վճռական հաղթանակը կապելով ապագա Հայաստանի և ազգային ուժեղ գրականության հետ:

Թումանյանի մոտ հակասություն գոյություն չի ունեցել գրական լեզվի մշակման պրակտիկայի ու տեսության միջև: Թումանյանն իրավացի է եղել իր նա՛և տնտեսության մեջ: